նկարներով։ Կազմը բաղկացած է ծանր փայտի տախտակներից, 27×21 սմ., և պատած է մարոկոյի կաշվով։ Կտրվածքը 8 սմ հաստություն ունի։ Մեջքն ունի հինգ կողեր։ Առաջին երեսը գրեթե ամբողջովին զարդարված է ոսկեզօծ նկարներով և ունի 5 շրջանակ, որոնցից յուրաքանչյուրը մյուսից բաժանվում է կրկնակի գծով։ Այս շրջանակների մեջ եղած հարթությունը լցված է բազմատեսակ զարդարանքներով։ Մեջտեղում կա ձվաձև մեդալիոն, որտեղ փորագրված է խաչված Քրիստոսը՝ կույս Մարիամի և Հովհաննեսի միջև։ Խաչի վերևում կան ծանոթ գրերը՝ Հ. Ն. Թ. Հ. խաչը կանգնած է J. H. S. տառերի վրա։ Հետևի կազմը ևս գրեթե նույն ձևով է զարդարված. մեդալիոնում Մարիամ կույսը պատկերված է կիսալուսնի վրա նստած։ Քրիստոսը խաչված վիճակում պատկերող մեդալիոն մենք հանդիպում ենք նաև մի այլ հայերեն գրքի առաջին և հետևի կազմի վրա։ Դա գտնվում է Ամստերդամի համալսարանական գրադարանում և պրոֆ. Մակլերի կողմից այսպես է նկարագրվում. «(Վեմ հավատո... Կ. Պոլիս, տպարան Մահտեսի Աստվածատուրի, 1773) in 4° 660 էջ. Տպագրիչի հիշատակարան, 1660 էջ։ Գրքի կազմը փայտից, ամբողջովին հորթի կաշի. երկու երեսին էլ ոսկյա զարդարանքներ, մեջքի վրա ծաղկազարդեր։ Երկու երեսի վրա՝ «խաչելությունը» Յ. Ն. Թ. Հ. խորագրերով և երկու ճարմանդ։ Վերևի երեսում՝ «Ալեքսանդր Դ. Ի. Մասսե»։

Փարիզի Աստվածաշնչի կազմի կտրվածքները, իմ կարծիքով, զարդարված են ինչպես հարկն է արժանի կերպով։ Ոսկեզօծ մասերի վրա կատարված են զանազան գունավոր նկարներ։ Ներքևի կտրվածքի վրա, ի միջի այլոց, կա մի կնոջ նկար միանձնուհու հագուստով, երկու ձեռքերով բռնած մի թաշկինակ, որի վրա նկարված է Քրիստոսի գլուխը։ Ըստ պրոֆ. Մակլերի, այս նկարը սուրբ Վերոնիկային չէ որ պատկերում է իր քրտինք-թաշկինակով, այլ ավելի շուտ հիշեցնում է Եղեսիայի թագավոր Աբգարի մասին եղած վաղեմի այն ավանդությունը, ըստ որի նա ուներ այն թաշկինակը, որի վրա դրոշմված է եղել Քրիստոսի դեմքը...

Պարզ է, որ Մագնուսը այս աշխատանքի համար ճշգրիտ հրահանգներ է ստացել Ոսկան եպիսկոպոսից։ Գուցե և նա հենց նկարներ է ստացել, որոնց նա պետք է վերատպագրեր։ Բացի դրանից այս պատկերները, իհարկե, լրացնում են մեր դիտելիքներն այն երևելի արվեստի մասին, որով նկարներ էին դնում գրքերի կտրվածքների վրա։ Հայտնի է, որ այս արվեստը Մագնուսի աշխատանոցում կիրառվում էր հատուկ գերադասումով։

1666 թ. հայերեն Աստվածաշնչի մեր մատնանշած այն օրինակի համար, որը գտնվում է Լեյդենի համալսարանական գրադարանում—ըստ պրոֆ. Բիվանքի, նույնպես Ալբերտ Մագնուսն է կազմ պատրաստել։ Այս կազմը ևս բաղկացած է ամուր տախտակներից 27×21 սմ չափով,—ուրեմն նույն չափի է, ինչ Փարիզի Աստվածաշնչինը,—ծածկված է հորթի կաշվով և ներկված է այնպես, որ կրիայի վահանի է նմանվում։ Կտրվածքը մոտավորապես 8,5 սմ հաստություն ունի, մեջքն ունի 5 կողեր։ Կազմի երեսների զարդարանքները բաղկացած են երկու շրջանակից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է տերևներից ու ճյուղերից կազմված մի գլանից, ուղիղ գծերի արանքներում կան թռչնիկներ. այդ գծերը իրենց հերթին, զարդարված են կողային գլաններով։ Կտրվածքները պարզապես ոսկեզօծված են և ոչ թե փորագրված կամ նկարված։

Այժմ մնում է ինձ նշել Ոսկանի հայկական Աստվածաշնչի երրորդ պահված օրինակի մասին7։ Այս օրինակը ևս ունի ամուր փայտի տախտակներ, ծածկված հորթի շագանակագույն կաշվով, նույնպես 27×21 սմ չափով։ Թե՛ առաջին և թե վերջին երեսները ամուր կնքված են և զարդարված արևելյան ֆիգուրներով։ Կտրվածքներն ունեն 8,5 սմ հաստություն և հինգ կող։ Ամբողջ առաջին երեսի վրա կա մի մեծ խաչ, որը բաղկացած է կրկնակի գծերից, արանքներում նույն արևելյան ֆիգուրները։ Այս Աստվածաշնչի երեք կտրվածքներն էլ զարդարված են ծաղիկներով և տերև-ճյուղերով։ Չնայած նշված Աստվածաշունչը այնպես հարուստ կազմ չունի, ինչ ունեն Փարիզի և Լեյդենի օրինակները, այնուամենայնիվ մենք մեզ երջանիկ պիտի համարենք, որ այս օրինակը ևս պահված է մինչ այսօր։ Հասկանալի է, որ այս աշխատության մեջ մենք գտնում ենք այն բոլոր նկարագրությունները, ինչ մենք տեսանք նախորդ երկու աստվածաշնչերի մեջ։ Դեռ ավելին, այն դեղեցիկ տառերը, որոնք հավանաբար Ոսկանը վերցրել է իր եղբայր Ավետիսից և որոնք գուցե փորագրել պատրաստել է Քրիստոֆել վան Դեյկը, թեև դժվար է պնդելը։ Կարճ ժամանակ սրանից առաջ այս Աստվածաշունչն ինձ ցույց տրվեց Բ. Մ. Իսրայելի հնությունների տանը (Ամստերդամ, Սինգել ջրանցքի շրջան). նրա սեփականատերը ինձ պատմեց, որ այդ աշխատությունը պիտի վաճառվի Ամստերդամի գրադարանին։

Այժմ Ոսկանի Աստվածաշնչի երրորդ օրինակը բարեբախտաբար գտնվում է Ամստերդամի

---

7 Ոսկանի տպագրած Աստվածաշնչի շատ օրինակներ պահվում են Հայաստանի տարբեր գրադարաններում։